Արձանագրություն N 2
ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/6 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14 նոյեմբերի 2024թ
ժամը 12:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Դավիթ Մելիքյանը
անդամներ՝ Արբակ Սանամյանը, Լիանա Ասրյանը, Նվարդ Սարգսյանը,
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Հասմիկ Ղուլյանը

ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2024թ նոյեմբերի 13-ին կայանալիք հայտերի բացման և գնահատման նիստն իրավազոր չէր՝ բացակայում էր հանձնաժողովի (armeps.am) համակարգում բացող անդամ՝ Լուսինե Շարաֆյանը /գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ: Հնարավոր չէր ապահովել Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի № Ա/243 հրամանով գնահատող հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկված հանձնաժողովի (armeps.am) համակարգում բացող անդամ Լուսինե Շարաֆյանի ներկայությունը, ուստի կասեցվել է գնման գործընթացը և հետագա բնականոն գործընթացն ապահովելու նպատակով, 2024թ. նոյեմբերի 13-ի № № Ա/256 հրամանով հանձնաժողովի կազմում կատարվել է փոփոխություն և հանձնաժողովի կազմում ընդգրկվել է Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր իրավաբան՝ Նվարդ Սարգսյանը:

I. Հայտերի բացման մասին

(Դավիթ Մելիքյան)

ա/ Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	***Մասնակցի անվանումը***		***Մասնակցի կապի միջոցները***
1	2		3
1	«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ*	-	ք. Երևան, Վաղարշյան փ.12ա, 307ս, հեռ. + (374) 94 945588, karen.nersisyan@natksystems.com
2	«Վեբստարտ» ՍՊԸ	-	ք. Երևան, Ոսկերիչների 2/9, հեռ. +374 43534534, webtsartdigital@yandex.com

***Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

բ/ էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը դիտվել են որպես (պիտանի) հայտեր:

գ/ Մասնակիցների կողմից ծառայությունների մատուցման համար առաջարկված գինը հետևյալն է.

Հ/Հ	Մասնակցի	
	անվանումը	առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)
1	2	3
1	«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ*	7900000
2	«Վեբստարտ» ՍՊԸ	5375000
գնման գինը (ՀՀ դրամ)		7933600

դ/ Հայտերի հետ կանչ կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և

պատասխաններ չեն եղել:

ե/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

II. Հայտերի գնահատման մասին

(Դավիթ Մելիքյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության և «Վեբստարտ» ՍՊ ընկերության կողմից էլեկտրոնային ձևով (armeps) համակարգով ներկայացված հայտերի փաստաթղթերը և արձանագրեց, որ.

ա/ «Վեբստարտ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում բացակայում են հրավերով սահմանված՝ պիտանելիության չափորոշիչի փաստաթղթերը, աշխատակազմի վերաբերյալ տեղեկանքը համաձայն հավելված N 1.1-ի, հրավերի 1-ին մասի 2.7 կետով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման համար որակավորումը հավաստող փաստաթղթերը, մասնավորապես.

1) հայտով ներկայացված չեն աշխատանքային ռեսուրսներ չափանիշի գնահատման համար հրավերով սահմանված փաստաթղթերը՝ առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տեղեկանքը համաձայն հավելված N 1.1-ի և կից փաստաթղթերը, աշխատակազմի որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) աշխատանքային փորձը հավաստող (հիմնավորող) փաստաթղթերի (աշխատանքային գրքույկ, աշխատանքային գրքույկի թվայնացված տարբերակ, անհատական հաշվի քաղվածք կամ գործատուի կողմից տրվող համապատասխան տեղեկանք և այլն) պատճենները:

2) հայտով ներկայացված չեն մասնագիտական փորձառություն չափանիշի գնահատման համար հրավերով սահմանված փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում, Հայաստանում պատշաճ ձևով իրականացրած առնվազն մեկ պայմանագիր՝ նախկինում կատարված պայմանագրերի պատճենները և կատարված պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) «Վեբստարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած դիմում-հայտարարությունը՝ (հավելված 1), գնային առաջարկը՝ (հավելված 2) էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է թիմի ղեկավար՝ Արման Հովհաննիսյանի կողմից, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը: Հրավերի պահանջների համաձայն հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ):

բ/ «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում բացակայում են հրավերով սահմանված՝ պիտանելիության չափորոշիչի փաստաթղթերը՝ հրավերի 1-ին մասի 2.7 կետով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման համար որակավորումը հավաստող փաստաթղթերը, մասնավորապես.

1) հայտով ներկայացված չեն աշխատանքային ռեսուրսներ չափանիշի գնահատման համար հրավերով սահմանված փաստաթղթերը՝ աշխատակազմի վերաբերյալ հավելված N 1.1-ով ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) աշխատանքային փորձը հավաստող (հիմնավորող) փաստաթղթերի (աշխատանքային գրքույկ, աշխատանքային գրքույկի թվայնացված տարբերակ, անհատական հաշվի քաղվածք կամ գործատուի կողմից տրվող համապատասխան տեղեկանք և այլն) պատճենները:

2) մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքը (հավելված 1.1) չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին և ձևաչափին, մասնավորապես. տեղեկանքի վերջին պարբերությամբ «ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/6» ծածկագրով հրավերով սահմանված է, որ ընթացակարգի շրջանակներում մասնակիցները հավելված 1.1 տեղեկանքին կից (armeps համակարգով) հայտով պետք է ներկայացնեն առաջադրված աշխատակազմում ներգրավված

մասնագետների որակավորում հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը, ոչ թե ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում պետք է ներկայացնեն որակավորում հավաստող փաստաթղթերը:

3) հայտով ներկայացված չեն մասնագիտական փորձառություն չափանիշի գնահատման համար հրավերով սահմանված փաստաթղթերը՝ մասնավորապես. հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում, Հայաստանում պատշաճ ձևով իրականացրած առնվազն մեկ պայմանագիր՝ նախկինում կատարված պայմանագրերի պատճենները և կատարված պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջներով գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և գնանշման հրավերի 8.9 կետով սահմանված կարգով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2024թ. նոյեմբերի 18-ին ժամը 10.40-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Դավիթ Մելիքյան

անդամներ՝ _____ Արբակ Սանամյան

_____ Լիանա Ասրյան

_____ Նվարդ Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 14 նոյեմբերի 2024թ.

ՄՍԾ ԳՀԽԾՁԲ-25/6 ծածկագրով գնանշման հարցման ձևով ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Մելիքյանս, անդամներ՝ Արբակ Սանամյանս, Լիանա Ասրյանս, Նվարդ Սարգսյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Դավիթ Մելիքյան

անդամներ՝ _____ Արբակ Սանամյան

_____ Լիանա Ասրյան

_____ Նվարդ Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան